3782 704-ԱՀ

Ի
ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՆՁԻՆ
ՎՍԵՄԱՓԱՌ

# ԱՆՏՈՆԻ ԳԵՐ · ՀԱՍՈՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԳԵՐԱՏԻՆԿԻ ·
ՅԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՑ
ՆՈՒԷՐ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՓՈԽԱԴՐԵԱԼ Ի ՀՌՈՄԱՅ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՀՌՈՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՑ
1850

2006

23971
1277
39

Ի 11
3782 - ա. Գ

Ի

# ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ
# ՎՍԵՄԱՓԱՌ
# ԱՆՏՈՆԻ ԳԵՐ. ՀԱՍՈՒՆ
# ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ
# ՆԱԽ. ԿՈՍ.

## ԵՐԳ

Հոգի հրաման, եկ հանգիր յիս
Կայց հովանի թեւոցդ երեր,
Քեւ իմ բացցին մթերք սրտիս
ԶԴԻՑԱԶՆՈՅՆ փառս նուագել ։

ԶՀԱՍՈՒՆԵԱՆ ես սա երգեմ
Զանմահական գործոց ըղձեմ.
Ո՛ն արդ, եղբարք, զուարթացեմ
Երգել ընդ իս եւ ձեզ ի դէպ ։

Տօնախմբողք , եկէք այսօր
Նուագեցէք գեղեցկաբանս .
Քնար սրտից ձեր դաշնաւոր
Ընկերեցէ ինձ ի գովեստ :

Տեսի ըզՄա ի յակմբիս
Իբրև զարև յաստեղաց այսր .
Այնպէս բազմի ի մէջ խմբիս
Պճնեալ կերպիւն վեհափառ :

Խորհրդարար շուրջ ԱՆՏՈՆԻԴ
Պատկանն Հարք մեր պարէն .
Օհ և տեսիլ Սրբոյ Հոգւոյ
Բղխանէ սրտից մեր պատկեն :

Այս մանկանց և Ազգայթ
Ուղևորիմք ընդ Անտոնի .
Օգնն Հոգւոյն , եմք հաստատ՝
Ընդոյն կրթիս շաւիղ անբոյթ :

Քան զանազան աշխարհ համայն
Ունայն է Քեզ և բազմամբոխ ·
Ըանձնաւէրդ , Բնկլարայն
Սախա ճիլխ սէգ ըզգլուխ :

Հանգունատիպ մեր Լուսաւոր
՚Նահատակին Հօտից ՚ի սէր ·
Եւ Հովուապետ զգօն ես , Տէր ,
Եւ մնակեաց Դու յաշխարհի :

Դիւցազնական գործոցդ մեծեր
Մինչ ամբարեն Քեզ փառք բազում ·
Զորս թէ քերթողս երգել խնդրէր ,
Այլ երկնային է անպատում :

Խոնարհ Հոգիդ , լե՛ր ինձ Ներող
Երգարանիս ըզՔո զրուագ ·
Թէ չես Դու հաճ ընդ իմ Ներբող ,
Այլ բազմականքս լսեն անյագ :

Դու տուրք խաչանց զերկնից արօտ
Կոյս հաւատոյն ջամբես զճարակ .
Ըստ Լուսաւորին գառանց ըղձօտ
Ցերկրի տանես երկնից բնակ :

Քեւ հաստարմատ ցնծայցեն տունկք
Միշտ անապատ հողմոյն ի մարտ .
Երկնաժառանգ Ուխտի մանկունք
Քեւ ծաղկեսցին բարձրասաղարթ :

Եկեղեցիք Հայաստանեայց
Քեւ զգեցցին փառք անապատն .
Դպրոց եւ դաս գիտնականաց ,
Կանգնեսցեն Քեզ անմահ արձան :

Արդ՝ Տէր Յիսուս , հայեաց յերկնից ,
Քո է Հովիւս եւ Քո այս Հօտ .
Պահեա յերկար ի վտանգից
Սորա ըզկեանս՝ դու առատ :

Սուրբ Հայրապետ , ընկալ զիմ երգ՝
Զոր աստ խմբիւ Քեզ նուիրեմք .
Ում ոչ է եթ նուագ աննենգ ,
Սիրտ շնորհապարտ սերտիւ ձօնեմք ։

Թէ՛ ի յաջոյդ զերթ ի յամպոց
Իջցէ առ մեզ ցօղ օրհնութեան .
Բացցի բերան և որդւոց Քոց
Ի գոհութիւն լիաբերան ։